ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017թ հոկտեմբերի 26 N 188 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<Ն. ԲԱԶՄԱԲԵՐԴԻ Ե. ԱՍԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<Վ. ԲԱԶՄԱԲԵՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ԳԱՌՆԱՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԶՈՎԱՍԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՄԵԾԱԾՈՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՈՍԿԵԹԱՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԻՐԻՆԴԻ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԱՇՏԱՐԱԿԻ Ս. ՇԱՀԱԶԻԶԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ–728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2017 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ն. Բազմաբերդի Ե. Ասատրյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Վ. Բազմաբերդի հիմնական դպրոց>>, <<Գառնահովիտի միջնակարգ դպրոց>>, <<Զովասարի միջնակարգ դպրոց>>, <<Մեծաձորի հիմնական դպրոց>>, <<Ոսկեթասի միջնակարգ դպրոց>>, <<Իրինդի Մ. Քոթանյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Աշտարակի Ս. Շահազիզի անվան թիվ 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2014-2016թթ համակարգի գնահատման աուդիտ բաժնի պետ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ Սիրան Ասատրյանի, Ենոք Մինասյանի, Արթուր Կարապետյանի և Գոռ Եգորյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 30 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2017 թվականի հոկտեմբերի 27-ից ավարտել դեկտեմբերի 7-ին:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ